

ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լատիներենը տիպաբանական բնորոշմամբ թեքական-համադրական լեզու է, նրա հիման վրա ձևավորված ֆրանսերենը՝ անջատական-վերլուծական: Վերջին տարիներին, ուսումնասիրելով ֆրանսերենի բանավոր տարբերակում գործող զարգացման հիմնական միտումները (բանավոր, որովհետև այն ավելի քիչ է ենթարկվում նորմայի ազդեցությանը), լեզվաբանները պնդում են, որ ֆրանսերենն անցնում է կցական-համադրական լեզվատիպին: Անհայտորեն տեղի է ունենում շրջապատույտային անցում համադրական և վերլուծական տիպերի միջև, և մեր խնդիրն է փորձել վեր հանել որոշ միտումներ, որոնք գործել են և գործում են ֆրանսերենում, մի լեզվատիպից մյուսին անցնելիս:

Շեշտի դերը չափազանց կարևոր է հարացույցային և շարակարգային փոփոխություններում, մաս՝ բառի ծավալման և իմաստային փոխանցման մեջ: Դա առավել ակնհայտ է լեզվի զարգացման տարածամասնակյա պլանում: «Նախահնդեվրոպական շրջանին բնորոշ են եղել թույլ շեշտված (հետմաշար-ջայնությամբ բնութագրվող) և անշեշտ (կոկորդայնացմամբ բնութագրվող) արմատական կազմություններ»¹, դասական լատիներենի շեշտը բնութավորվել էր ժողովրդական լատիներենից՝ ուժային: Ժողովրդական լատիներենում միաժամանակ հանդիպում են վերջահար, հարաշեշտ և նախահար շեշտ կրող բառեր, իսկ գալլո-ռոմանական լեզվում, հին ֆրանսերենում ակնհայտ է վերջահար շեշտի նախապատվությունը: Միջին ֆրանսերենում ձևավորվում է ռիթմիկ շեշտը, ժամանակակից ֆրանսերենում այն կայունանում է վերջին վանկի ծայնավորի վրա (և հիմնականում՝ նույն վանկի, որը շեշտվում էր դասական լատիներենում՝ լատ. *liber* > ֆր. *libre*): Երևույթն ինքնին հանգեցնում է անշեշտ ծայնավորների թուլացմանն ու սղմանը, հետևաբար և՛ բառերի ծավալի կրճատմանը ֆրանսերենում: Օր.՝ *patrem* > *père*, *asinum* > *zèbre*... Համաժամանակյա կտրվածքում ֆրանսերենի միավանկ բառերի քանակն ամենաշատն է ռոմանական բոլոր լեզուների համեմատությամբ: Այդուհանդերձ արդի ֆրանսերենում դիտվում է երկվանկ ձևերի գերակայություն: Դրանց աճին նպաստում են նաև քերականական որոշ գործընթացներ (օր.՝ հապավումները՝ *accro(cher)*, *hallu(cination)*), ինչի վերաբերյալ չափազանց հետաքրքիր դիտարկում է կատարում Մ. Կիլանի-Շոխը, այն է՝ ռիթմիկ պլանում

¹ Տես Վարդիկյան Յու. Մ. «Հայերեն և նախահնդեվրոպական լեզուն», Եր. 2001, էջ 177:

լամբական կառույցի աճ ֆրանսերենում՝ իբրև զարգացման հիմնական միտումներից մեկը²:

Այսպիսով՝ երկարատև զարգացման արդյունքում ֆրանսերենում ունենում ենք վերջին վանկի վրա կայունացած շեշտ, ինչը զուգընթաց է լեզվում ձևավորվող առաջադասության միտմանը. շեշտի դիրքի փոփոխությունը հակակշռվում է բառահարաբերակցային միջոցների դիրքի փոփոխությամբ: Վաղ լատիներենը բնույթով հետադաս էր, օր.³ ուղղ. *puella* - սեռ. *puellae*, բայական խոնարհման մեջ՝ *ama*-սիրում եմ, *ama*-սիրում ես, *ama*-սիրում է, իսկ ֆրանսերենը ձևավորվում է իբրև առաջադասության գերակայությամբ լեզու՝ *la jeune fille* - *de la* *jeune* *fil*le, *j* aime- սիրում եմ, *t*u aime- սիրում ես, *i*l aime- սիրում է: Դեռևս Շ. Բալլին նկատել էր, որ ֆրանսերենն աստիճանաբար վերացնում է արմատին հաջորդող թեքական տարրերն ու դրանք փոխարինում արմատին նախորդող տարրերով³: Թեքական տիպն, ըստ բնական մոտեցման, առավել քիչ է կարևորում իմաստային և ձևաշարադասային հստակությունը, ձգտում հնարավորինս սեղմ միջոցներով արտահայտել թեքականական իմաստներն ու գործառույթները: Ուստի բառերի ծավալի կրճատումը ֆրանսերենում իր հետևանքներն է ունենում թե՛ հարացույցային, և թե՛ շարակարգային պլանում. եթե համադրական փուլում բառային հարաբերություններն իրականացվում են հարացույցային մակարդակում, ապա վերլուծական փուլ անցնելիս մեծանում է շարակարգային մակարդակի դերը: Օր.³ լատ. *ama*- վերջավորությունը միաժամանակ մատնանշում է դեմք և թիվ, իսկ ժնկ. ֆր.³ *i*l aime, դեմքի և թվի կարգերն արտահայտվում են նախադաս անձնական դերանվան միջոցով:

Արդեն իսկ ժողովրդական լատիներենում սկսում է գործել հոլովական համակարգի վերացման միտումը, ինչը և հանդիսանում է նոր լեզվատիպի կայացման կարևոր նախապայմաններից մեկը: Հին ֆրանսերենը դեռևս պահպանում էր բայական թեքումը, իսկ հոլովի կարգից՝ միայն ենթակայի և ուղիղ խնդրի հոլովները: Հարկ է նշել, որ հին ֆրանսերենում երկու հոլովների գործածությունը որոշ դեպքերում տարարմատ ձևերի առաջացման պատճառ է դարձել: Մինևույն բառի երկու հոլովական ձևերն օգտագործվել են իբրև առանձին բառեր, և հնչյունական զարգացման արդյունքում ձևավորվել են տարարմատ զույգեր, որոնցից կարող ենք նշել *neveu* / *nièce*, *œil* / *yeux*: Այս

² St'u Kilani-Scotch M. «Introduction à la morphologie naturelle», Berne-Francfort-s Main-New York-Paris, 1988, էջ 188-190:

³ St'u Bally Ch. «Linguistique générale et linguistique française», էջ 11:

գույգերի առաքին անդամներն առաջացել են ենթակայի հոլովական ձևից, իսկ երկրորդները՝ խնդրի:

Հնագույն տեքստերի օգնությամբ կարելի է վերականգնել հոլովական համակարգի զարգացման հիմնական միտումը. կան բազում օրինակներ, որտեղ ենթակայի փոխարեն օգտագործվում է խնդիրը՝ *Roland li ber*՝ *Rolanz* ձևի փոխարեն, *les oilz en la teste li turnent*՝ *li oil* ձևի փոխարեն, և այլն⁴: Ըստ Էկերտի⁵ հիմնական տիպաբանական խզումը ֆրանսերենի և լատիներենի միջև տեղի է ունենում միջին ֆրանսերենում (14-15-րդ դդ.)՝ պայմանավորելով լեզվի ինքնատիպ զարգացումը: Հիրավի, հենց այդ փուլում ավարտին է հասնում հոլովական համակարգի վերացման միտումը. լեզվի զարգացումն աստիճանաբար տանում է խնդրային հոլովի գերակայությանը՝ պահպանելով մեկ ձև եզակի թվի և մեկ ձև՝ հոգնակի թվի համար: Իսկ ինչո՞ւ է պայմանավորված ենթակայի հոլովի վերացումը: Հոլովական համակարգի տարածմանակյա զարգացման փաստերի հաշվառումը թույլ է տալիս ենթադրել, որ դա բնական զարգացման արդյունք է: Յու. Գաբրիելյանը համոզիչ փաստեր է բերում այն մասին, որ վաղ հնդեվրոպական շրջանում «առարկա նշանակող ձևը ... չէր կարող ունենալ ուղղականի նշանակություն, քանի որ ... բայը, գուրկ լինելով ժամանակի, սեռի, կերպի և եղանակի քերականական կարգերից, ենթակա-խնդիր հարաբերություններ չէր կարող արտահայտել»⁶: Եթե վաղ հնդեվրոպական շրջանում, ըստ Յու. Գաբրիելյանի, վերականգնվում են միայն սեռականն ու հայցականը (աբսոլյուտիվը), ապա ենթակայի հոլովի կորուստն ու խնդրային հոլովի պահպանումը պետք է դիտել իբրև օրինաչափ զարգացում, միտումների հակադարձ գործողության հետևանք: Սեռական հոլովի իմաստը սկսում է արտահայտվել վերլուծական կառույցների օգնությամբ, գերակայում է նախադասության ուղիղ շարադասությունը, գոյականը հանդես է գալիս հոդի հետ, բայական համակարգում աստիճանաբար տեղի է ունենում ցուցիչների միօրինակեցում, քերականական գործառնություններն արտահայտվում են ոչ թե բառային մակարդակում, այլ բառախմբերի, և էլի ուրիշ միտումներ, որոնք ակնհայտորեն վկայում են անքատական լեզվատիպի կայացման մասին:

⁴ Stéu A. Lagarde, L. Michard «Moyen Age», Paris 1975, էջ 22-24:

⁵ Stéu BÖHME-ECKERT, G. "De l'ancien français au français moderne: l'évolution vers un type 'à part' à l'époque du moyen français". In: *Langue Française* 141, mars 2004: *Le français parmi les langues romanes*, Hrsg. von Mario Barra Jover: էջ 56-68.

⁶ Տե՛ս Գաբրիելյան Յու. Ս. «Հնդեվրոպական լեզուներում հոլովական ձևերի զարգացման խնդիրը», ԲԵՀ, 2005, 3, էջ 88:

Նախահնդեվրոպական լեզվին, ըստ Յու. Գաբրիելյանի⁷, բնորոշ էր շրթնային տարրերի նշույթավորվածություն (թուլություն), իսկ ընդհանուր հնդեվրոպականի քայքայումից հետո ձևավորված երկու բարբառային խմբերին՝ հետնալեզվայինների նշույթավորվածություն, հետևաբար և՛ առաջնալեզվայինների ուժեղացում: Արդեն իսկ հին ֆրանսերենում սկսում է ձևավորվել և կայունանալ լեզվի էական առանձնահատկություններից մեկը՝ առաջնալեզվային արտաբերման միտումը:

Հին ֆրանսերենում, ի տարբերություն լատիներենի, բայն էլ ձգտում է դեպի նախադասության սկիզբ, և աստիճանաբար կայունանում է նախադասության ուղիղ շարադասությունը՝ SVX (S- ենթակա, V- բայ, X- խնդիր):

19-րդ և 20-րդ դ.դ. ֆրանսերենում առարկա և հատկանիշ (նկատի ունենք ոչ միայն ածականն, այլև բայը) ցույց տվող բառերից կազմված բարդությունների վերլուծության ժամանակ աչքի է զառնում այն փաստը, որ դրանք առավելապես ներկայանում են ՀԱՏԿԱՆԻՇ + ԱՌԱՐԿԱ նվազագույն կաղապարով, օր.⁷ un chasse-neige, un presse-citron, un haut-relief, un haut-parleur և այլն: Այս միտումը դիտվում է լեզվի զարգացման ողջ ընթացքում, և 19-րդ և 20-րդ դ.դ. որոշ բարդություններ կազմվում են հենց միջին և ժամանակակից ֆրանսերենի բարդությունների կաղապարների հիման վրա: Հատկանիշի առաջադասությունը բարդություններում թույլ է տալիս ենթադրել, որ լեզվի հետագա զարգացման հիմնական միտումներից պետք է լինի բայի առաջադասության միտումը՝ SVX→VSX: Մեկ փաստ ևս՝ քանի դեռ հին ֆրանսերենը պահպանում էր հարուստ բայական թեքում, անձնական դերանունների օգտագործումը պարտադիր չէր: Թեքման նվազմանն ու անջատականության աճին զուգահեռ մեծանում է վերջիններիս դերը: Իսկ ժամանակակից ֆրանսերենում, չունենալով ինքնուրույն գործածություն և կորցնելով շարահյուսական ազատությունը, անձնական դերանունները բայի հետ կազմում են արտասանական միասնություն (*je suis* [ʒui], *//* *voilà* [ʎwa]), ինչը լեզվաբաններին թույլ է տալիս ենթադրություն կատարել իբրև ձևաբանական ցուցիչներ նրանց զարգացման մասին: Ֆրանսերենում նախածանցային կազմության զարգացման մասին խոսվում է դեռևս Լ. Տենիերից սկսած. լեզվաբաններն այստեղ տեսնում են լատիներենի հետ համեմատելի թեքական նոր կարգ: Ահա թե ինչու, վերլուծելով ֆրանսերենի նախադասության շարահյուսական կառուցվածքը, Հարրիսը փաստարկներ է բերում այն մասին, որ ժամանակակից ֆրանսերենը զարգանում է իբրև բայի սկզբնական դիրքով

⁷ Տե՛ս Գաբրիելյան Յու. Մ. «Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն», Եր. 2001, էջ 123:

լեզու, այսինքն՝ անձնական դերանունը վեր է լուծվում իբրև ձևաբանական ցուցիչ:

Ֆրանսերենում նոր լեզվատիպի կայացման վերաբերյալ կարելի է բերել ևս մեկ կարևոր փաստ: Համեմատության աստիճանները ֆրանսերենում կազմվում են վերլուծական կառույցների օգնությամբ: Այսօր, սակայն, դիտվում է նախածանցման միջոցով բացարձակ գերադրական աստիճանի կազմության լայն տարածում (hyper-, super-, ultra-, extra-, sur-, archi-, supra-, sous-, sub-, infra-, hypo- և այլն): Երևույթն, անշուշտ, նորություն չէ ֆրանսերենում, պարզապես ժամանակակից ֆրանսերենն ավելին, քան երբևէ, ընդարձակել է այս միջոցների օգտագործումն ու տարբերակումը: Պետք է ընդգծել այն փաստը, որ նախածանցման ժամանակ հիմքի ձևափոխության և ձևաշարադասային հստակությունը պահպանվում է, ինչը հատուկ է հատկապես կցական տիպի լեզուներին: Ուստի բացարձակ գերադրականի կազմությունը նախածանցման միջոցով կարելի է դիտել իբրև ևս մեկ անցումային օղակ վերլուծական ու համադրական տիպերի միջև: Ավելացնենք հետաքրքիր մի փաստ ևս՝ վերոհիշյալ նախածանցներով կազմությունները կարող են շեշտ կրել բառասկզբում, ինչն, անշուշտ, թելադրվում է կայացող նոր լեզվատիպով:

Ամփոփելով՝ նշենք, որ հնչույթաբանական, ձևաբանական, և շարահյուսական պլաններում գործող միտումները՝ առաջադասության գերակայությամբ, թույլ են տալիս կանխատեսել արդի ֆրանսերենի անցումը նոր՝ կցական լեզվատիպին:

* St'U Kilani-Scoch M. « Introduction à la morphologie naturelle », Berne-Francfort-s Main -New York-Paris, 1988, էջ 172-174: